

ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԸ ՀԱՅԱԳԻՐ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴԻՐ

Ջ. Սիրզաբեկյան

Անգնահատելի է Մեսրոպ Մաշտոցի դերը համաշխարհային մշակույթի պատմության գանձարանում: Հայոց գրերի ստեղծումը մեծագույն սխրանք է և գիտական հանճարեղ ներդրում: Սակայն, ինչպես պարզվում է իր ժամանակակիցների և աշակերտների հավաստի ու անվերապահ հաղորդումներից, Մաշտոցը նաև հիմնադիրն է հայագիր դպրության: Իր ապրած դարաշրջանի պատմական իրադարձությունները քրիստոնեությունը որպես պետական ու համահայկական կրոն, ժամանակի հզոր պետությունների (Ասորեստան, Բյուզանդիա, Իրան և ուրիշներ) անդադար ասպատակությունները ու, ի վերջո, Հայաստանի մասնատումը պատճառած բազում վնասներով հանդերձ հայության անվերապահ ուժացումը ու նաև հայրենիքի կորուստը պետք է կյանքի կոչելին ազգի պահպանման վեհ զաղափարը: Ուստի պատահական չէ, որ այդ ճակատագրական թոհուրեհում համախմբվեցին պետական (Վռամշապուհ արքա), կրոնական (Մահակ Պարթև կաթողիկոս) և որ գլխավորն է՝ գիտական միտքը (Մեսրոպ Մաշտոց): Ու վերջինս դարձավ հայ ժողովրդի հերոսական մաքառումների մի ամբողջ դարաշրջանի ծնունդը, որով և ժողովրդին պարզապես հայեցի ինքնության հավերժական կենսազգացություն ու վճռականություն:

Մաշտոցի գիտական սխրանքը այն բացառիկ կանխագուշակումն էր, որ նա կատարեց և գտավ, որ ազգի հոգևոր անկախության ու ազատության կայուն ապահովումը ոչ միայն այրուբենի ստեղծումն էր, այլև հայագիր դպրության ստեղծումն ու զարգացումը, որովհետև մի ամբողջ հարյուրամյակ քրիստոնեությունը Հայաստանում ձևական բնույթ էր կրում: Ինչպես Փավստոս Բյուզանդն է հավաստում «... ի վաղնջուց յորմէ հետէ առին նոքա (հայերը) գանուն քրիստոնեութեանն, լոկ միայն զկրօսն իմն մարդկութեան յանձինս իւրեանց և ոչ ջերմեանոց ինչ հաատովք ընկալան, այլ իբրև զմոլորութիւն իմն մարդկութեան և հարկէ»:

Դեռևս Կորյունը «Մաշտոցի աշակերտն ու կենսագիրը, հինգերորդ դարում խորապես հասկացել էր իր ուսուցչի քաղաքակրթական մեծագույն նախաձեռնումների բախտորոշ նշանակությունը՝ միասնական մատենագրության և ուղղագրության հույժ կարևորությունը ազգային հոգևոր կյանքի և ինքնության ասպարեզներում:

ՓՈՒՍԱՌՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ԴԵՐՆ ՈՒ ՏԵՂԸ ՀԱՅՆԵՐԵՆԻ

ՏԵՐՄԻՆԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՄԵՉ

Հ. Պետրոսյան

Լինելով «բաց» համակարգ լեզվի բառապաշարն ամենանթանկալի է արտաքին ազդեցություններին, ինչը առաջին հերթին դրսևորվում է փոխառությունների, հատկապես տերմինային փոխառությունների հարցում: Որպես լեզուների փոխհարստացման միջոց փոխառությունը տարբեր լեզուներում տարբեր կերպ է գիտակցվում: որոշ լեզուներում այն տերմինաշինության, այսինքն բառաշինության բաղկացուցիչներից մեկն է, այլ լեզուների համար՝ գիտության և տեխնիկայի տվյալ պահի զարգացումից ետ չմնալու հարկադրանք է այնքան ժամանակ, մինչև սեփական բառակազմական հնարավորություններով կստեղծվի, կթարգմանվի կամ կբառապատճենվի տվյալ տերմինը:

Իր պատմական զարգացման բոլոր փուլերում հայերենը, ինչպես աշխարհի լեզուների մեծամասնությունը, հարստացել է փոխառություններով, որոնց գերակշիռ մասը, համագործածական բառեր լինելուց զատ, նաև տերմիններ են:

Պայմանավորված հասարակական, տնտեսական, գիտամշակութային զարգացման մակարդակով փոխառությունների քանակը հայերենի զարգացման տարբեր փուլերում տարբեր է: Փոխառությունների քանակը տարբեր է նաև լեզվի գրավոր և բանավոր ժողովրդախոսակցական ոլորտներում: Հայերեն գրավոր ոլորտին բնորոշ է սեփական լեզվամիջոցների գործադրմամբ հասկացությունն անվանելու, օտար տերմինը թարգմանելու կամ պատճենելու գործընթացը: Հայերենում փոխառություն կատարվում է միայն այն դեպքում, երբ սպառված են սեփական լեզվական հնարավորությունները:

Լեզուներում փոխառության իրողությունը պայմանավորված է մի շարք գործոններով, որոնք ներկայանում են երկու հիմնական դասակարգմամբ՝ 1) արտաքին արտալեզվաբանական և 2) ներքին լեզվաբանական: Փոխառության արտալեզվաբանական հիմնական գործոնը ժողովուրդների միջև գոյություն ունեցող քաղաքական, տնտեսական, գիտամշակութային կապերն են, որոնց ակտիվացումն անպայմանորեն խթանում է փոխառության (կամ փոխառության) երևույթների ակտիվացումը:

Տերմինաբանությանը մկրված հայալեզու գրականության մեջ քիչ ուշադրություն է դարձվել փոխառությանն առնչվող հետևյալ հիմնախնդիրներին.

1. Գրեթե լուսաբանված չեն փոխառության ներքին լեզվաբանական գործոնները:
2. Ճշգրտված չեն փոխառության սահմանները մասնավորապես բառապատճենումների հարցում, հստակորեն դասակարգված չեն փոխառության տեսակները կամ տիպերը:
3. Սեփական լեզվամիջոցներով տերմինի կերտումը, որքան էլ որ այն հաջողված լինի, դեռ երաշխիք չէ նրա կայուն, մշտական գործածության: Մասնագիտական գրականության մեջ դեռևս լիովին բացահայտված չեն նաև տերմինագործածությանն առնչվող հարցերը, մասնավորապես այն հարցը, թե ինչ՞նչ, օրինակ, և իմաստաբանական-մասնագիտական, և լեզվաբանական-քերականագիտական առումներով միանգամայն ճշգրիտ տերմինը համառոտն է կայունանում լեզվում, չի գտնում իր մշտական գործածությունը:

Փորձ է արվում ներկայացնելու փոխառության հարցերում հայերենին բնորոշ առանձնահատկությունները և այն հիմնական գործոնները, որոնց պատճառով հաճախ ամենահաջող թարգմանված տերմինն անգամ մնում է որպես բառարանային հարստություն:

Վերոհիշյալ հարցերն աշխատանքում դիտարկված են մեթենագիտության տերմինա-համակարգերի օրինակներով:

ՉԱՐԵՆՏԸ ԱՉԳԻ ՀԱՎԵՐԺՈՒԹՅԱՆ ՀՈՒՅՄԻ ՋԱՅԱԿԻՐ

Գ. Վարդանյան

Քանի որ դարի առաջին տասնամյակներին, երբ աշխարհը դարձել էր վիթխարի հրդեհ-կիզարան, որի մեջ մոխրանում ու չքվում էին գահեր, կայսրություններ, երբ պատմության հերթական կենդանում թուրքական արյունոտ յարազանի փայլը մթագնում էր հայ ժողովրդի ներկան ու ճակատագրի հորիզոնը, պետք է հայտնվեր իրական-առասպելական մի ոգի՝ հայոց վշտի ու տառապանքի մեջ լինելու ազգի մարմնական ու հոգևոր անմահության աներեր հավատացյալը: Այդ ոգին Չարենցը եղավ:

Չարենցյան քնարերգության ընդգրկումները սահմանագծելու համար սոսկ երևակայական մշահածողեր դնելն անգամ դժվար է: Սեր և կարոտ, վերուշ և երազ, խոհ և ապրում, իրականություն և տեսիլք, իրապատում և իրաշապատում, ծննդավայր և տիեզերք, կին և աստվածուհի, անհատ և ամբոխներ... Ոլորտների այսպիսի բազմազանության մեջ անթեղված ու անշեջ կրակի պես մորմոքում է բանաստեղծի հիմնական, առանցքային մտահոգությունը՝ հայրենիքի թեման:

Չարենցի բանաստեղծական աշխարհում աստվածատուր սերն անգամ պարուրված է հայրենիքի անանց պատկերներով: Դրանք հինավուրց ազգի հնավանդ պատմութ-

յունեն են, կապուտայա Նաիրիի առասպելներն ու հոգևոր գանձերը, մաքառումներով լեցուն հազարամյա անցյալի հիշողությունը: Իր ոգու հայրենիք համարելով բովանդակ աշխարհը բանաստեղծն այդ աշխարհի գեղարվեստական վերլուծությունն իմաստավորում է ազգային գոյության տեսանկյունից, ուստի և բովանդակ աշխարհի տանող շարենցյան բոլոր ուղիներն անցնում են հայոց կյանքի, պատմության, վշտի ու ոգու ոլորաններով: Մռայլ են անցյալի գույները, մղձմվանջային է հայոց ներկան, ու թվում է, Չարենցոգին էլ կրճերի դաժան իրականության ճնշման տակ, և... կմարի վերջին հույսը: Անկումների սարսափը մաշեց և ի վերջո, կտրեց շատ-շատերի հույսի թելը, սակայն Չարենցը ամենաանձնական մտորումներում անգամ չտվեց «մի՞թե վերջին պոետն են ես» տեղյանական հարցը, որքան էլ այն հռետորական հնչեր, մանավանդ որ նրա հեռաբափանց միտքը նշմարում էր նոր աղետներ, որոնք նյութվում էին խորհրդային կայսրության բռնապետի նենգ ուղեղում:

Ճշմարիտ մեծերի նման Չարենցը ևս անձնական կյանք չունեցավ: Նրա մշտական հոգսը հայրենիքի օրհասական վիճակն էր, հույսը ազգի այսօրվա ու վաղվա ապահովության թեկուզ աննշան երաշխիքը, հավատը հայ ոգու հավերժությունը: Չարենցյան բնարը համակված է հավատի զարմանալի լույսով, այլապես նա ինքն անիմաստ կհամարեր տաղեր ծոնել բնությանը, գրքերին, խորհուրդներ տալ գալիքի սերմնացաններին...

Ամսասան է Չարենցի հավատը ազգի լավ ապագայի նկատմամբ, և այդ ջերմեռանդ հավատով է հագեցված նրա քնարերգության յուրաքանչյուր տողը:

ԳԻՏԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՍՐԱԳՐՈՒՄԸ

Մ. Հայրապետյան

Կղզիացած մշակույթներն ու քաղաքակրթությունները, նախնական փուլում որքան էլ առաջավոր եղած լինեն, դատապարտված են դեգրադացիայի, երբեմն կործանման: 406թ - ին հաջորդած 2-3 տասնամյակների հայ ամբողջ գրականությունը թարգմանական էր:

Գիտական գրականության թարգմանությունն ունի իր առանձնահատկությունները. ա)թարգմանության մեջ եզրը (տերմին) պետք է մեծինաստ լինի, բ)նախընտրելի է, որ մտնավանդ եզրերն արտահայտվեն առավելագույն հակիրճությամբ և սակավ բառախմբով, գ)տեքստային բնօրինակի ձևական հաջորդականությունը պահպանելը պարտադիր է, դ)ի տարբերություն գեղարվեստական գրականության, անհրաժեշտ է խուսափել հուզականություն արտահայտող հոմանիշներից, եթե բնագրում չեզոք ձևն է, ե)եթե հայերենում չկա տվյալ եզրի համարժեքը կամ եղածը թերի է համարվում, ապա թարգմանիչն իր ստեղծած և առաջին անգամ կիրառած կամ իրեն չբավարարած, բայց նախկինում արդեն իսկ օգտագործված եզրի կողքին, փակագծում բնագրով կամ հայերեն տառադարձմամբ պետք է նշի տվյալ եզրը տեքստում առավելագույն առաջին անգամ կիրառելիս, գ)պարտադիր է բնօրինակի լեզվի տրամաբանությունը թարգմանվող լեզվի կաղապարներին համապատասխանեցնելը, է)այլ առանձնահատկությունների շարքում կարևորվում է նաև այն, որ նպատակահարմար են գիտական գրականության թարգմանիչի տվյալ գիտության մասնագետ և թարգմանվող լեզվով կրթություն ունենալու հանգամանքները:

Գեղարվեստական, մանկական և այլ գրականությունների ու պարբերական մամուլի խմբագրումներից որոշակիորեն տարբերվում է գիտական գրականության խմբագրումը: Ելնեք մի քանի կարևոր առանձնահատկություն. ա)մասնագիտական խմբագրում – հիմնականում կատարվում է եզրերի համապատասխանեցման, մասնագիտական աղբյուրների հղումների ստուգման, անհրաժեշտ հավելումների կամ կրճատումների, ծանոթագրությունների համալիրի բավարարության աստիճանի որոշման և համապատասխան տեսքի բերե-

լու աշխատանք, բ)լեզվա-ոճական խմբագրում – բավարարվում են տվյալ լեզվի լեզվական և ոճական պահանջները կարող է իրականացնել միայն բանաստեղծ. այս խմբի մեջ են մտնում նաև սրբագրման և մասնագիտական-տեխնիկական համապատասխանեցման աշխատանքները, գ)ընդհանուր խմբագրում – իրականացնում է գլխավոր խմբագիրը, որը համակարգում և ղեկավարում է մասնագիտական, գեղարվեստական, տեխնիկական և լեզվա-ոճական հարցերով խմբագիրների աշխատանքները. անհրաժեշտության դեպքում կատարվում են հավելումներ, կրճատումներ, նոր գլուխների, բաժինների պատվիրումներ, բովանդակության հարցում հերթագայության ճշգրտում, լեզվա-ոճական՝ սպորտած անհարթությունների վերջնական շտկում, վերջնական վերատրամագրում, գեղարվեստական ձևավորման հաստատում և այլն:

Անհրաժեշտ է ավելացնել, որ հայոց լեզվով առայժմ չկա ոչ թարգմանության, ոչ խմբագրման արվեստների վերաբերող (տեխնիկական մասնագիտորեն քննելու տեսանկյունից) որևէ գիտական աշխատություն. եղած միակ աշխատանքը Լ. Տեր-Պետրոսյանի «Հայ հին թարգմանական գրականություն» արժեքավոր գրքույկն է (Երևան, «Սովետական գրող», 1984թ.), որը նվիրված է պատմական, գրական-մշակութային առնչությունների հարցերին:

ՈՃԱԳԻՏԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀՎՈՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հ.Լալայան

Ոճագիտական հարցերը քննվել են մերթ լեզվաբանության, մերթ գրականության, մերթ պոեզիայի հարցերի հետ գիրքընդհառն, և ոճագիտությունը գրկվել է ինքնուրույն գիտություն լինելու հնարավորությունից: Սինչդեռ հայոց լեզուն, որ աշխարհի հնագույն լեզուներից մեկն է և աչքի է ընկնում ոչ միայն հարուստ բառապաշարով ու քերականական կառուցվածքով, այլև ոճական իրողությունների բազմազանությամբ, կարևոր նյութ կարող էր տալ ոճագիտությանը: Եվ ուրախությամբ պիտի նշել, որ վերջին տարիներին հայ իրականության մեջ նկատվում է որոշակի աշխուժացում հայոց լեզվի ոճական հարցերի ուսումնասիրության բնագավառում:

Ոճաբանությունը (ստիլիստիկա), չնայած իր պատմական աղբյուրներին, նոր ձևավորված գիտաճյուղ է, որը հենվում է լեզվաբանական մյուս գիտաճյուղերի վրա, սակայն ունի իր յուրահատուկ խնդիրները: Ոճաբանության պատմական արմատները պետք է փնտրել հին աշխարհի հռետորական արվեստի և պոետիկայի ակունքներում: Մեր գեղուցման մեջ աշխատում ենք համառոտակի մեկնաբանել ինչպես ոճագիտության արմատները, այնպես էլ նրա զարգացման ուղղությունները:

ՄԱՎԱՆԱԿԱՆ ԵՎ ԲԱՅԱԿԱՆ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ ՈՒ ԻՄԱՍՏԱԶԱՏԻՉ ԴԵՐԸ ԳՈՒՆԱՆԻՉ ԲԱՂԱԳՐԻՉՆԵՐ ԴԱՐՈՒՆԱԿՈՂ ԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՉՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Հ.Ղազարյան

Քոլոր լեզուներում, այդ թվում անգլերենում, հայերենում և ռուսերենում բայական դարձվածային միավորները մեծ թիվ են կազմում: Նրանք աչքի են ընկնում գործածության մեծ ոլորտով, կառուցվածքային ամենաբազմազան տիպերով, իմաստային քերականական ու ոճական առանձնահատկություններով:

Դառնալով դարձվածքի բաղադրիչ՝ բայը ստանում է նոր իմաստ՝ վերահիմաստավորելով դարձվածքի մյուս բաղադրիչները ևս: Դարձվածքն ամբողջությամբ ոչ միայն ան-

վանում է գործողությունը, եղելությունը կամ իրավիճակը, այլև արտահայտում է բայերի հետ կապված տարբեր վերաիմաստավորված հարաբերություններ:

Բայական դարձվածքներն ընդհանրապես բաղկացած են լինում երկու մասից: Մի մասը դարձվածքի գերադաս անդամն է՝ անորոշ դերբայը, մյուս մասն անվանական մասն է իր երկու, երեք կամ ավելի բաղադրիչներով:

Թե հայերենում ու ռուսերենում և թե անգլերենում բայական դարձվածքային միավորները կարող են հանդես գալ երկու ձևով: Մի դեպքում նրանք կարող են ունենալ անվանողական արժեք, և այս դեպքում նրանց գերադաս անդամն անորոշ դերբայն է: Այսպիսի դարձվածքները նախադասության մեջ կատարում են շարահյուսական տարբեր պաշտոններ: Երկրորդ դեպքում, ստորոգման շնորհիվ, դարձվածքը ձեռք է բերում հաղորդակցական արժեք: Ենթադրյալ դարձվածքները, ունենալով քերականական կարգերի հարացուցային լրիվ կամ բերի ձևեր, խոսքում կարող են օգտագործվել որպես տարբեր նախադասություններ:

Բայական դարձվածքների անվանողական և բայական բաղադրիչներն ունեն ձևաբանական և շարահյուսական մի շարք առանձնահատկություններ, որոնց բնույթը կարող է տարբերվել տարբեր լեզուներում մասնավորապես հայերենում, անգլերենում և ռուսերենում: Այսպես օրինակ, գոյականական բաղադրիչները կարող են ունենալ թվի, իրի ու անձի, հոլովի քերականական կարգեր հայերենում, ռուսերենում և անգլերենում, սեռի քերականական կարգը ռուսերենում, հոդի քերականական կարգը հայերենում և անգլերենում: Ածականները կարող են ունենալ համեմատության աստիճանների քերականական կարգը:

Բայական բաղադրիչները ընդհանրապես ունենում են սեռի, եղանակի, ժամանակի, դեմքի և թվի քերականական կարգեր, ինչպես նաև հաստատական ժխտականի հակադրություն: Անգլերենում և ռուսերենում գործում է նաև կերպի քերականական կարգը:

Գույնանիշ բայական դարձվածքներն էլ, բայական դարձվածքային միավորներ լինելով, օժտված են այս բոլոր առանձնահատկություններով:

ОПИСАТЕЛЬНЫЕ ВЫРАЖЕНИЯ КАК СРЕДСТВА СВЯЗИ В ТЕКСТЕ

С. Асатрян

Наблюдая за речью студентов, можно заметить, что они используют средства связи предложений (лексические повторы, местоимения, наречия), но лексические и морфологические средства связи (текстовые или лексические синонимы) употребляются ими редко и однообразно.

Совершенно очевидно, что средства межфразовой связи надо обучать. Умение использовать различные средства межфразовой связи делает речь студентов богаче, образней, выразительней.

Один из возможных путей обогащения речи использование перифраз.

Перифразы или описательные обороты, выражения могут быть контекстуальные или ситуативные, общепринятые. И контекстуальные, и ситуативные перифразы обогащают содержание контекста, а для связи первого предложения со вторым могут использоваться различные средства. Поэтому, работая над текстом, мы выбираем такие отрывки, абзацы, где перифразы, обозначая предмет, понятие, явление, одновременно выполняют функцию скрепы.

Так студенты приходят к выводу, что перифразы не только способствуют развитию речи, но и играют немаловажную роль в строении текста. Работа над перифразами (описательными оборотами, описательными выражениями) как средством связи должна быть целенаправленной, ежеурочной. Только тогда она положительно

скажется на развитии речи учащихся, а значит на умении воспринимать и воспроизводить научные и технические тексты.

В нашем докладе мы приводим многочисленные примеры использования описательных выражений как средства связи в тексте, а также описываем методы и приемы, которые используются нами в работе по обогащению речи студентов.

ИЗУЧЕНИЕ СЕМАНТИКИ СЛОВ СТУДЕНТАМИ НЕЯЗЫКОВОГО ВУЗА

С.Мартirosян

"Большинство слов любого развитого языка характеризуется многозначностью" - эту мысль может подтвердить любой современный словарь языка, где большое количество слов является многозначным. Это определение многозначности основывается на понимании слова как основной лексической единицы языка.

В современной лингвистике различают основные (номинативные) и производные значения полисемичных слов. Не все значения многозначного слова могут быть введены в учебный процесс, так как они неодинаково употребительны как в русском литературном языке, так и в ходе речевого общения: запас активных полисемичных слов у студентов незначителен. Информанты испытывают трудности в восприятии и усвоении как услышанного, так и прочитанного, не умеют употреблять полисемичную лексику при выражении своих мыслей, поскольку усвоенные варианты значений полисемичного слова восприняты или вначале не в основном, номинативном значении, а в производном, или же вовсе не имеют номинативного значения и, естественно не употребляют его в практике своей речи, а если и употребляют, то ошибочно. Заученное значение в сознании студентов занимает преобладающую позицию.

Последовательная и систематически проводимая работа над семантической структурой полисемичного слова научит студентов-армян различать и применять в своей речи нужные значения полисемичного слова. У студентов формируются навыки понимания закономерностей сочетания слов с другими словами, вырабатывается языковое чутье на узнавание неизвестных им значений, появляется ориентир на подбор синонимов и антонимов к разным значениям.

Усвоение семантики надо начинать с основного значения. Студенты должны усвоить, что в системе значений полисемичного слова особенно четко выделяется основное, номинативное значение, которое является прямым названием предметов, действий, свойств. Вначале целесообразнее ввести понятие об основном, номинативном значении слова, а затем перейти к производному. Введение понятия должно сопровождаться примерами, наглядно показывающими те связи, которые лежат в основе слова. При этом соблюдается лингводидактический принцип от простого к сложному; добиваться того, чтобы студенты с помощью сопоставления, сравнения, подбора синонимов и антонимов делали соответствующие логические выводы, обретая тем самым навык свободного употребления разных значений полисемичного слова в речи. Лексический и грамматический анализ поможет студентам осознать всю сложность проявления полисемии.

Работа над семантической структурой полисемичного слова, безусловно, оказывает положительное влияние на усвоение грамматики.

При работе необходимо использовать знакомую лексику. Обогащение словаря студентов должно проходить не только за счет количественного состава, но и путем

качественного изменения. И так, полисема должна быть представлена в учебном процессе следующим образом: усвоение и разграничение основного и производного значения слов, объема их сочетаемости, показ их лексической и грамматической связи. Но все это не означает, что полисемическое слово вошло в актив студентов. Ведь "всякое слово так многозначно, так диалектично и так способно в контексте выражать все новые и новые смысловые оттенки, что нужно больше умения, чтобы правильно и точно выражать свою мысль".

КОНСПЕКТИРОВАНИЕ КАК ОДИН ИЗ ВИДОВ РАБОТ НАД СПЕЦИАЛЬНЫМ ТЕКСТОМ

М. Тер-Оганесян

Умение успешно работать над учебной и научной литературой на русском языке - одна из главных задач для студентов неязыковых вузов. Следовательно, преподавание русского языка как неродного не должно ограничиваться знакомством с языком общелитературным в его нейтрально-стилистической разновидности. Задача русиста - познакомить студента с закономерностями научной речи, сформировать умение свободно пользоваться специальной литературой на русском языке.

Для успешного решения этой проблемы необходимо выделить два аспекта:

1. Обучение студентов лексико-грамматическим особенностям научного стиля речи на материале специальных научных текстов.
2. Формирование умения читать специальный текст, анализируя его и извлекая нужную информацию.

Конспектирование является сложным и очень своеобразным процессом. В нем сочетается чтение (рецептивный вид речевой деятельности) с письмом (продуктивный вид речевой деятельности). Однако разные виды речевой деятельности при конспектировании сочетаются не механически. Фиксации полученной информации предшествует ее специфическая обработка. Конспектирующий не просто отбрасывает ненужную для него информацию и сокращает текст, а сворачивает его таким способом, чтобы и через достаточно длительный промежуток времени суметь вновь его развернуть без существенной утраты информации.

Работа по обучению конспектированию предполагает прежде всего формирование: а) навыка выделения главной информации и б) навыка свертывания информации - основных навыков, обеспечивающих смысловую сторону процесса конспектирования. Формирование их должно осуществляться на всех трех условно выделяемых этапах работы по обучению конспектированию.

На первом этапе задания преследуют цель формирования у студентов навыков понимания предложений текста, учат выделению в предложении слов, являющихся носителями основного смысла фразы, сокращению предложений за счет обучения в них наименее значительных в смысловом, структурном и коммуникативном отношениях элементов, перефразированию предложений, т.е. передаче их содержания другими словами и т.д.

На втором этапе при работе над абзацами текста даются задания, направленные на формирование умений выделять основную информацию абзацев и озаглавливать их, находить сведения, служащие ответом на определенные вопросы.

На третьем этапе ведется работа над всем текстом полностью, без членения его на абзацы. Основные задачи этого этапа - научить студентов ориентироваться в целом тексте, в его логических связях, определять главную информацию текста и т.д. На этом этапе даются также усложненные задания. Студентам предлагается составить план по текстам и т.д. Так студенты овладевают навыками написания рефератов.

Формирование перечисленных навыков и умений происходит путем выполнения целой серии специально составленных упражнений.

На занятии составленный студентами конспект проверяется с грамматической и с лексической точек зрения. Студент объясняет, что он считает основным из данного отрывка и как сумел отразить это в своем конспекте, почему он отнес записанное к такому-то пункту плана, доказывает правомочность замены лексики. Обсуждается синтаксическая конструкция предложений и употребление грамматических форм.

СПЕЦИАЛЬНАЯ ЛЕКСИКА

А. Егиян

В процессе профессиональной деятельности человека создаются новые идеи и вещи. Возникает необходимость образования новых лексических средств. Профессиональное знание требует овладения специальной лексикой.

К специальной лексике относятся все лексические средства, связанные с профессиональной деятельностью человека.

Не относятся слова, принадлежащие к территориальным диалектам, арголическая лексика, жаргонизмы, архаизмы и неологизмы. Но если архаизмы и неологизмы оказываются в рамках определенного подязыка (археология, техника), они принадлежат к специальной лексике.

Специальная лексика подвергается особому нормированию, в основе которого лежит производственная правильность. Для русской лексики свойственно образование вторичных прилагательных, совершенно излишних в лексике общей, ср. частотный, скоростной при общих частый, скорый.

Вторичность специальной лексики по отношению к общей особенно проследживается там, где она образована из слов своего языка, ср. в технике: вилка, ребро, стойка.

Не каждое специальное слово - термин. Для термина именуемое понятие есть и именуемый объект.

Научный термин - понятие данной области знания.

Помимо научных терминов выделяют технические термины. Они более конкретны, поскольку за ними стоит предмет технической мысли (цилиндр, поршень, ось).

Все свойства лексических единиц, выделяемые в работах по общей лексикологии, оказываются у слов специальной лексики иными.

Специальная лексика отличается от общей в следующих аспектах: 1. Перевод, 2. Заимствование, 3. Изменение или уточнение плана выражения, 4. Изменение или уточнение плана содержания, 5. Полисемия, 6. Омонимия, 7. Синонимия, 8. Антонимия.

Перевод слов специальной лексики относится к понятию, а не к языку вообще. Заимствование терминов осуществляется в тех случаях, когда в языке отсутствует понятие. Слова специальной лексики в различной степени обладают возможностью изменения или уточнения плана выражения, а также меняют план содержания.

Полисемия в научной и в особенности технической терминологии неизбежна. Омонимия представлена как в общей, так и в специальной лексике. Семантические отношения в лексической системе языка дополняются синонимией и антонимией.

Итак, у слов специальной лексики равномерность предметно-понятийной связи нарушается.

Основным требованием для терминов является однозначность, т.е. одно слово — один смысл. Но на практике дело обстоит иначе. Термин не может избавиться от языковой материальной формы, где отношения полисемии, омонимии, синонимии неизбежно присутствуют.

О ПРОГРАММЕ "РУССКИЙ ЯЗЫК ДЛЯ ТЕХНИЧЕСКИХ ВУЗОВ"

Н. Мкртчян, А. Назаретян

При разработке настоящей Программы авторы исходили из современных тенденций высшего образования и новейших достижений лингводидактики, из необходимости уточнить место дисциплины "Русский язык" в системе подготовки инженеров в ГИУА и пересмотреть сложившуюся практику его преподавания.

С этих позиций представляется неизбежным наличие в Программе теоретического введения, отражающего новую концепцию обучения русскому языку в ГИУА, разработанную авторами.

Адаптуясь к социальному заказу, авторы Программы попытались определить, что должны знать и уметь студенты ГИУА по окончании курса русского языка, каков минимальный уровень знаний и умений, которого должны достичь они, чтобы реализоваться в дальнейшей своей профессиональной деятельности.

Настоящая Программа ориентируется на функционально-стилистический уровень подачи языкового материала (научно-технический и производственно-деловой), что вызывает необходимость принципиально новой, собственно вузовской, организации занятий по русскому языку - введение лекционных и семинарских занятий.

НЕКОТОРЫЕ ТРУДНОСТИ ОБУЧЕНИЯ КАТЕГОРИИ ЧИСЛА ИМЕН СУЩЕСТВИТЕЛЬНЫХ В АРМЯНСКОЙ АУДИТОРИИ

А. Акопджанян, А. Оганесян

При обучении русскому языку в армянской аудитории обращают внимание прежде всего на такие грамматические категории, которые не имеют соответствия в армянском языке и преподавание которых особенно нуждается в продуманной методике. В этом плане интерес представляет грамматическая категория числа, поскольку она в русском языке хоть и соответствует логическому представлению о числе, но не обладает специальными формами, которые выражали бы только значение

числа, причем каждое из двух значений числа выражается шестью надежными формами. С другой стороны, в армянском языке показателями числа являются суффиксы, которые сохраняются при изменении слова по падежам, а падежные окончания единственного и множественного числа абсолютно идентичны. Из сопоставления общих систем грамматических средств выражения категории числа следует: 1) категория числа в русском языке проявляется гораздо шире, чем в армянском языке; 2) формы выражения множественного числа в русском языке гораздо разнообразнее, чем в армянском; 3) по своему характеру эти формы сложнее, чем армянском не только по способу образования, но и по содержанию, поскольку категория числа в русском языке выступает в увязке с другими грамматическими категориями.

Категория числа имен существительных представляет сложный предметно-смысловый узел, в котором сплетаются разнообразные грамматические и лексико-грамматические особенности существительных, а трудности, связанные с их усвоением, устраняются не путем механического заучивания правил, а систематическими упражнениями, которые помогут учащимся приобрести навыки в образовании форм множественного числа, что способствует приближению речи студентов к нормам русского литературного языка.

ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ

Դ. Չորյան

Բառապաշարը պատմական կարգ է:

Հայոց լեզվի պատմական զարգացման ընթացքում բառապաշարն անընդհատ փոփոխվում է, լրացվում, կատարելագործվում: Հասարակական կյանքում կատարվող փոփոխություններն առաջին հերթին իրենց արտացոլումը գտնում են բառապաշարի մեջ:

Նոր երևույթների ու առարկաների երևան գալու հետ լեզվի բառապաշարի համալրումը կատարվում է կամ սեփական բառերի կերտման, կամ էլ լեզուներից փոխառության միջոցով:

Հայոց լեզուն իր գրավոր շրջանում անցել է զարգացման 3 փուլ՝ հին գրական հայերեն (գրաբար), միջին հայերեն, նոր գրական հայերեն (աշխարհաբար):

Ժամանակակից հայոց գրական լեզվի արևելահայ տարբերակի բառապաշարը ընդգրկում է բառեր գրաբարյան, միջին հայերեն, բարբառային, արևելահայ և արևմտահայ գրական լեզուների շերտերից:

Ժամանակակից հայերենի բառապաշարի ուսումնասիրությանը վերաբերող գրականության մեջ հանդիպում են բառապաշարի ծագումնաբանական դասակարգման ընդունված անվանումների և խմբերի փոխարեն նոր անվանումներ և նոր խմբեր:

Փորձ է արվում ցույց տալ նոր անվանումների և ըստ խմբերի նոր դասակարգման անհարկի լինելը:

ՊՈՒԼԻՆԵԶԻԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ (ՀԱՅԿԱԿԱՆ) ԵՆԹԱՇԵՐՏԸ

Լ. Ստեփանյան

Պոլինեզիական լեզուների խումբը մեկնեզիական, միկրոնեզիական և ինդոնեզիական լեզվախմբերի հետ միասին կազմում է ավստրոնեզիական (մալայապոլինեզիական) լեզվաընտանիքը: Պոլինեզիական լեզուների խմբին են դասվում մարկիզերեն, Թաիթերեն,

մադրի, տոնգա, սամոա, ռապանուեթեն, հավայերեն և այլ լեզուներ: Տարբեր լինելով հանդերձ, այս բոլոր լեզուներին միավորում է միևնույն նախալեզուն պոլինեզիացիների նախահայրերի լեզուն, որ նրանք բերել են իրենց առասպելական հայրենիքից: Թե՛ պոլինեզիական նախալեզվի և թե՛ պոլինեզիացիների նախահայրենիքի հարցերն առայսօր մնում են վիճահարույց: Հինք ընդունելով առանձին բառեր և արտահայտություններ, մասնագետներն այդ նախահայրենիքը փնտրում են Չնդկաստանում, Եգիպտոսում, Շումերում և այլուր, իսկ մարդաբանական և մշակութային անուրանալի ընդհանրություններն ստիպում են ենթադրել, թե պոլինեզիացիների նախահայրերը եկել են նախակուրուբուայան Ամերիկայից: Այս բարդ հարցին պատասխանելուն մեծապես կնպաստեր պոլինեզիական լեզուների ուսումնասիրությունն ու համեմատությունը այլ լեզուների հետ:

Փորձ է արվել զուգահեռներ անցկացնել պոլինեզիական լեզուների և հայերենի հիմնական բառաֆոնդերի միջև՝ շեշտը դնելով ռապանուեթեն լեզվի վրա: Աշխատանքը շատ բարդ է հետևյալ պատճառներով.

ա) պոլինեզիական նախալեզվին և համեմատվող լեզվին (հայերեն) բաժանում է առնվազն հինգ-վեց հազարամյակ (պոլինեզիացիների նախահայրերն այստեղ են հասել մ.թ.ա. II հազարամյակում, հետևապես ենթադրում ենք, որ Հայկական լեռնաշխարհից դուրս են եկել գոնե մ.թ.ա. IV հազարամյակի սկզբին կամ ավելի շուտ),

բ) այդ ընթացքում տեղի են ունեցել նաև ավստրալոիդ և մոնղոլոիդ ցեղերի ներգաղթեր, որոնք իրենց դրոշմն են թողել թե՛ ժողովրդագրական պատկերի, թե՛ լեզվի վրա երբեմն անճանաչելիորեն փոխելով բառերը:

գ) պոլինեզիական լեզուների համեմատաբար քիչ ուսումնասիրված լինելը, ինչպես նաև ռուսա- և հայալեզու գրականության սակավությունը:

Այս ամենով հանդերձ, հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ պոլինեզիական լեզուներում առկա են հայկական արմատներ, որոնք պայմանականորեն բաժանել ենք հետևյալ խմբերի.

ա) բառեր, որոնք թե՛ հնչյունական կառուցվածքով, թե՛ իմաստով նույնն են համեմատվող լեզուներում,

բ) հնչյունափոխված հայերեն արմատներ, որոնք երկու լեզուներում նույնիմաստ են,

գ) բառեր, որոնց մեջ և՛ արմատն է հնչյունափոխված, և՛ իմաստային տեսակետից կան նրբերանգային տարբերություններ:

Բացահայտվել են հայերենից պոլինեզերեն անցման կայուն օրինակափոխություններ, կատարվել է դասակարգում ըստ այդ օրինակափոխությունների: Հայտնաբերված հայերեն արմատական բառերն ընդգրկում են ամենաբազմազան ոլորտներ. ընտանեկան կապեր, բնության բազմապիսի երևույթներ, բույսեր, մարմնի մասեր, զանազան գործողություններ, դիցաբանություն և նախապաշարմունքներ, հագուստ, զարդեր, թիվ, ճանապարհ, ժամանակ, տեղ, կյանքի սովորական իրողություններ:

Բացահայտվել են վաղմջագույն հայերեն արմատներ, որոնք թե՛ն գոյատևում են բարդ բառերի մեջ, սակայն իմաստի մթազնելու կամ լիովին մոռացվելու պատճառով ժամանակակից հայերենում չեն ընկալվում որպես առանձին արմատներ:

Կատարված հետազոտությունները թույլ են տալիս փաստել պոլինեզիական լեզուներում հայկական ենթաշերտի գոյությունը:

ԴԵՐԲԱՅԱԿԱՆ ԴԱՐՁՎԱԾԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՏԵՆՆԻԿԱԿԱՆ ԲՈՒՅՈՒՄ

Ա.Սարտիրոսյան

Դերբայական դարձվածի ուսուցումը տեսական և գործնական կարևոր նշանակություն ունի, քանզի դրա խոր ընկալումն ու առանձնահատկությունների բազմակողմանի յուրացումը կնպաստի ուսանողների գրավոր և բանավոր խոսքի ոճավորմանը:

Թեմայի ուսուցումը պետք է կատարվի ավելի շատ ոչ թե տեսական նյութի հաղորդման, այլ գործնական աշխատանքի ու վարժությունների կատարման միջոցով:

Հայերենում դերբայական դարձվածի ուսուցման արդյունավետության առումով նպատակային կլինի դասավանդման պրոցեսը տանել հետևյալ հաջորդականությամբ.

1. Նախադասությունների մեջ դերբայների ճանաչում.

2. Դերբայական դարձվածի որպես նախադասության մեկ անդամի ընկալում.

3. Դերբայական դարձվածով պարզ նախադասությունը բարդ դարձնելիս և հակառակը բարդ նախադասությունը պարզելիս կատարվող փոփոխությունների ճանաչում և յուրացում.

4. Դերբայական դարձվածի շարահասության (նախադաս, միջադաս, վերջադաս) ցուցադրում.

5. Դերբայական դարձվածի կետադրության (տրոհվող և չտրոհվող դերբայական դարձվածներ) ուսուցում.

6. Դերբայական դարձվածի շարահասության, կետադրության ամփոփում բազմաբարդ նախադասության մեջ:

7. Դերբայով արտահայտված կայուն, քարացած դարձվածքների տարբերակում, նրանց առանձնահատկությունների ցուցադրում և ուսուցում:

Գործնական պարապմունքների ժամանակ օգտագործվող օրինակներն ընտրել գեղարվեստական գրականությունից, որն էլ կապահովի լեզվի և գրականության կապը, դասը կդարձնի հետաքրքիր, թեման մտապահվող:

ԱՐՄԱՏԱԿԱՆ ԱԾԱԿԱՆՆԵՐԻ ԲԱՌԻՄԱՏԱՅԻՆ ՍԱՅՄԱՆԱՓՈՎԱԿՈՒՄՆԵՐՈՎ ՀԱՄԱՆԻՇՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԲԱՐԲԱՆԵՐՈՒՄ

Յ. Մեսրոպյան

1. Հայերենի բարբառների բառապաշարի իմաստաբանության ուսումնասիրությունն ի հայտ է բերում ուշագրավ առանձնահատկություններ: Մեր ուսումնասիրության նյութը ժամանակակից արևելահայերենի արմատական ածականների բարբառային համարժեքներն են, դրանց իմաստաբանական, բառակազմական, հնչյունական և այլ դրսևորումները:

Ուսումնասիրության ընթացքում մենք արդեն անդրադարձել ենք արմատական ածականների բարբառային համանիշների մի քանի իմաստային խմբերի, որոնք այժմ են ընկնում գործածության բարձր համախականությամբ (ինչպես մեծ և փոքր, հարուստ և աղքատ):

Բննարկել ենք նաև իմաստաբանորեն երկբաղադրիչ երբեմն եռաբաղադրիչ համանիշները (քոչուտ, Տգր- փոքր և սիրունիկ, սոնա, Միս, Հվր, Վն - բարձր ու գեղեցիկ, ջեղուկար, Սք - միհար ու ջլապինդ, ջղուլ, Խրք, Քղի - տմև, երկար ու բարակ և այլն), ինչպես նաև արմատական ածականների բառակապակցական համանշությունը (սրտին փասերը բացված, Աք - զվարթ, ջիլավը ծեռքը պահած, Դրք - զուսպ, սատանի պիպիճ, Վն (Պպ) - հանդուզն և այլն):

2. Սույն գեկուցման մեջ մեր ուշադրության առարկան արմատական ածականների բարբառային այն համանիշներն են, որոնք հանդես են գալիս իմաստային որոշակի սահմանափակումներով: Այդ համանիշները քննության ենք առնում հնչյունական, բառային և բառակազմական, հատկապես իմաստաբանական առանձնահատկությունների տեսանկյունից:

3. Իմաստային սահմանափակումով անվանումը պայմանական է: Տերմինի ընտրությունը առաջմ մոտավոր է, սակայն տերմինի հիմքում ընկած երևույթը զգալիորեն տարածված է հայերենի բարբառներում: Դա այն դեպքն է, երբ տվյալ ածականի համանիշը բար-

բառներից որևէ մեկուն իմաստային սահմանափակում ունի, այսինքն կարող է վերաբերել միայն կնոջ կամ տղամարդու, երեխայի, կենդանու, բույսի և այլն: Օրինակ հին անականին համանիշ է շածա ձևը, որը Ակնի բարբառում ասվում է միայն մթերքի մասին, փուչ բառի չալուղ հոմանիշը Յանձենի բարբառում կիրառվում է միայն ընկույզի հատկանիշն արտահայտելու համար, Բաղեշի խոսվածքում սվորիկ (երկար ու բարակ) բառով բնորոշվում է միայն օձը:

4. Իմաստային սահմանափակման երևույթի մի խումբ ենք համարել արհամարհական և հեզմական երանգով ասվող բառերը, ինչպես նաև արձատական անականների փոխաբերական կիրառությամբ հանդես եկող բարբառային համանիշները: Օրինակ աղքատ բառը Նոր Ջուղայի բարբառում ունի ջլատոտիճգ արհամարհական ձևը, իսկ Վանի բարբառում սելուխ ձևը, որը հանդես է գալիս փոխաբերական իմաստով: Բառի ուղիղ իմաստ է մերկ Արարատյան, Թբիլիսիի բարբառներում, Գանձակի և այլ խոսվածքներում ազնիվ բառի համար որպես համանիշ է կիրառվում ջուհար պահլավական փոխառությունը փոխաբերական իմաստով:

5. Արձատական անականների բարբառային համանիշները երբեմն արտահայտվում են բառակապակցությամբ, որոնց դեպքում նա առկա է իմաստային սահմանափակումը: Այսպես, Սեբաստիայի բարբառում աշխույժ բառի համար ունենք սատանան բանվոր բռնած բառակապակցությամբ արտահայտված համանիշը, որը վերաբերում է միայն երեխային:

ՀԱՅԱԳԵՏՆԵՐԻ ԿԵՆՍԱՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԲԱՌԱՐՆՆ

Ա. Պետրոսյան

Ա. Հայագիտությունը միջազգային գիտական ուսումնասիրության առարկա, նախապատմության, զարգացման փուլեր, շարժառիթներ:

Հայագիտությունը սկզբնավորվել է շատ ավելի վաղ՝ Վերածննդի շրջանից, քեև տերմինը՝ որպես այդպիսին, ձևավորվել է ավելի ուշ: Մխիթար Աբբասիոր Աստվածնչի հրատարակությունը (1735), Հայկազյան բառարանը (1749), Նոր Հայկազյան բառարանի հայտնությունը (1836), Մխիթարյանների կողմից հրատարակված հին մատենագիտական երկերը (առաջինը՝ 1826թ.-ին) կազմում են հայագիտության անարկուն հիմքը: Չամչյանից մինչև Ալիշան ու մինչև մեր օրերը հսկայական աշխատանք է կատարվել կատարելագործելու այն ընդհուպ մինչև միջազգային ուսումնասիրության կարգավիճակի ձեռքբերումը: Հայագիտության որպես գիտության առանձին ճյուղի սկզբնավորման դրդապատճառները հիմնականում ներառում են երեք հանգամանք. պատմական-դիվանագիտական, կրոնական, դավանաբանական, գիտական: Հայագիտության նկատմամբ հետաքրքրությունը արևմտյան բոլոր երկրներից ամենավաղ Ֆրանսիայում է արտահայտվել: Հետագայում այս ալիքը տարածվում է Գերմանիա, Ռուսաստան, Անգլիա, Բելգիա, Իտալիա, Չեխոսլովակիա, Հունգարիա, Լեհաստան, ԱՄՆ, Մերձավոր Արևելք, Իսլանդիա, Հունաստան, որը քաղաքակիրթ աշխարհը: Վենետիկի Մխիթարյանները իրենց «Բազմավեպով», «Հանդես ամսօրյայով» դարձան այդ երկրներում ծավալված հայագիտական աշխատանքների ղեկավարող, շարժիչ ուժը, ուսուցիչը:

Բ. Հայագիտական ուսումնասիրությունների համակարգման և մեկտեղման աշխատանքների համառոտ պատմություն:

Տարբեր ժամանակներում, սկսած 19-րդ դ. վերջերից, նախաձեռնությամբ Մխիթարյան Հայրերի, արվել են մի շարք փորձեր՝ ի մի բերելու աշխարհասփյուռ հայագիտական նյութը: Դա հայագիտության հետագա զարգացմանն ու խթանմանը նպաստող հրամայական պահանջ էր: Ուստի նախաձեռնողները փորձել են որոշ հավաքչական աշխատանք կա-

տարել: Սակայն ժամանակի և հանգամանքների բերումով նշված հայագետների աշխատանքները կրել են մասնակի բնույթ:

Գ. Ներկայացվող աշխատանքի առանձնահատկությունները, բովանդակային սահմանները, նպատակը, կառուցվածքը, չափանիշները, սկզբունքները:

Հայոց պատմության միջնադարյան և Նոր շրջանների սահմանագիծը (18-րդ դարի վերջ), գրականության բոլոր տեսակների ձեռագիր, տպագիր շրջանների հերթագայությունը հիմք դարձնելով, բառարանի ժամանակագրական սկիզբը, որոշ պայմանականությամբ, սահմանվում է 18-րդ դարի վերջից և 19-րդ դարի սկզբից մինչև մեր օրերը ստեղծագործած հայ և օտար գիտնականների ուսումնասիրությունները:

Բառարանը ունի իր անվանը հատուկ անձնանունների այբբենական դասավորության վրա հիմնված պարզ կառուցվածք՝ անուն, համառոտ կենսագրություն, տպագիր բոլոր տեսակի աշխատությունների հնարավոր չափով ամբողջական ժամանակագրական ցանկ, որի մեջ ամեն տարվա ներքո գետեղվում են նախ գրքերը, ապա հոդվածները, վերջում գրախոսություններն ու գրածանոթությունները:

Տպագիր նյութը ներառում է հայագիտությունը ներկայացնող հետևյալ բնագավառները. պատմություն, պատմական աշխարհագրություն, լեզու, լեզվաբանություն, գրականության պատմություն, ձեռագրագիտություն, աղբյուրագիտություն, հնագիտություն, ազգագրություն, փիլիսոփայության պատմություն, դրամագիտություն, մանկավարժության պատմություն, մանուկ պատմություն, իրավագիտության պատմություն, տոնարագիտություն, արվեստ, կրոն, եկեղեցի, դավանագիտություն:

Բառարանը հետապնդում է հայագիտության ձեռքբերումներն ու նրա ներկա կացությունը, Հայաստանին և հայոց վերաբերող գիտությունների հետագա զարգացմանը նոր լիցք հաղորդելու նպատակ: